

«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության  
ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի  
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ա. Մարտիրոսյան \_\_\_\_\_

26 հունվարի 2023 թ.



2022 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Տնօրենի խոսքը

2023 թվականը սկսվեց որակավորումների ճանաչման համար հիանալի լուրով՝ գլոբալ կոնվենցիան ուժի մեջ կմտնի 2023 թվականի մարտի 5-ին հետևյալ պետությունների համար՝ Անդորրա, Հայաստան, Կաբո Վերդե, Կոտ դ'Իվուար, Խորվաթիա, Կուբա, Էստոնիա, Ֆրանսիա, Սուրբ Աթոռ, Իսլանդիա, Ճապոնիա, Լիտվա, Նիկարագուա, Նորվեգիա, Պաղեստին, Ռումինիա, Սլովակիա, Շվեդիա, Թունիս և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն: Անկասկած, շատ արագ կոնվենցիային կմիանան երկրներ աշխարհի տարբեր տարածաշրջաններից: ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման մասին գլոբալ կոնվենցիան մի գործիք է, որը մեծապես խթանում է ուսանողների կրթության ու շարժունության հնարավորությունները: Ես այս տողերը գրում եմ հպարտության հատուկ զգացումով, քանի որ մասնակցել եմ այսպիսի օրենսդրական փաստաթուղթ ունենալու առաջին քննարկումներին և հետագայում նաև դրա մշակմանը:

Այսօր աշխարհի տարբեր երկրների համալսարաններում սովորում են շուրջ 235 միլիոն ուսանող: Այնուամենայնիվ, չնայած ընդհանուր պահանջարկի աճին, ընդգրկվածության ընդհանուր հարաբերակցությունը կազմում է միայն 40%՝ երկրների և տարածաշրջանների միջև առկա են մեծ տարբերություններ: ՅՈՒՆԵՍԿՕ-ն ՄԱԿ-ի միակ գործակալությունն է, որն ունի բարձրագույն կրթության ոլորտում ծրագրեր իրականացնելու մանդատ և աշխատում է երկրների հետ՝ ապահովելու հասանելի և որակյալ բարձրագույն կրթության հնարավորություններ բոլորի համար: Այն հատուկ ուշադրություն է դարձնում որակավորումների ճանաչմանը և որակի ապահովմանը, հատկապես զարգացող երկրներում:

Մեր կենտրոնի համար տարին եղել է չափազանց լարված՝ մոտ 70% աճել է ուսումնասիրված որակավորումների թիվը, միջազգային ծրագրեր և զեկուցումներ, մասնակցություն ENIC-NARIC և APNNIC ցանցերի հարցումներին, հետազոտություններ, փախստականների որակավորումների գնահատման սեսիաներ, ուսուցումներ և վերապատրաստումներ բուհերի համար, նոր գործընկերներ և անդամակցություն: Հաշվի առելով ֆինանսական միջոցների սահմանափակությունը և ԱՓՇԱՏԿ-ի փոքր անձնակազմը, առանց ավելորդ համեստության կարող եմ գնահատել կենտրոնի աշխատանքը որպես խիստ արդյունավետ:

Գայանե Հարությունյան

## **1. Տեղեկատվության տրամադրում տեղական և արտասահմանյան գործընկերներին**


2022թ. ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իր գործունեությունը նոր, հարմարավետ գրասենյակում, որը անշուշտ արդյունավետ աշխատանքի գրավական է: Ազգային տեղեկատվական կենտրոնը իրականացրել է իր հիմնական գործառույթները. օտարերկրյա որակավորումների գնահատում, խորհրդատվության ու տեղեկատվության տրամադրում կրթական համակարգերի և շնորհված որակավորումների, դրանց վերջնարդյունքների, ակադեմիական և մասնագիտական իրավունքների վերաբերյալ: ԱՓՇԱՏԿ-ի շահառուներն են անհատներ, տարբեր տեսակի տեղական և արտասահմանյան կառույցներ, մասնագիտական մարմիններ, ուսումնական հաստատություններ: 2022թ.-ի ընթացքում շարունակվել է ԱՓՇԱՏԿ-ի սերտ համագործակցությունը պետական մարմինների, գործատուների, միջազգային կառույցների հետ:

ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է նաև համագործակցել արտասահմանյան կառույցների հետ՝ տրամադրելով խորհրդատվություն և տեղեկատվություն ազգային կրթական համակարգերի, ուսումնական հաստատությունների կարգավիճակի և նրանց կողմից շնորհվող որակավորումների և դրանց իսկության, գիտելիքների գնահատման և կրեդիտային համակարգերի վերաբերյալ: Կենտրոնի միջազգային գործընկերների շրջանակը ընդգրկում է ENC-NARIC և APNNIC ցանցերը, տարբեր երկրների միգրացիոն ծառայությունները, դեսպանությունները, կրթական փաստաթղթերի իսկությամբ զբաղվող օտարերկրյա գործակալությունները, առողջապահության նախարարությունները, բուհերը և այլ հաստատություններ:

2022 թվականից կենտրոնը անդամակցել է TAICEP-ին, որը հանդիսանում է ԱՄՆ որակավորումների գնահատման մասնագետների միջազգային ասոցիացիա: Անդամակցումը հնարավորություն է տալիս միանալ TAICEP-ի ցանցին, որը գնահատման մասնագետների էլեկտրոնային հարթակ է որևէ բուհի կամ որակավորման մասին շատ արագ տեղեկատվություն ստանալու համար: ԱՓՇԱՏԿ-ը հնարավորություն է ստացել երկու անձի համար մեկ տարվա անվճար անդամության:

*Պատկեր 1-ում* ներկայացված է ազգային կրթական համակարգի և ազգային որակավորումների վերաբերյալ տրամադրված խորհրդատվությունը՝ ըստ երկրների:

Պատկեր 1: ՀՀ կրթական համակարգի և որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը ըստ երկրների



2022թ. հարցումների գերակշռող մասը ստացվել է ՀՀ պետական կառույցներից (74%): Հատկանշական է, որ նույնքան ամսին ԿԳՄՍ նախարարությունը դիմել է կենտրոնին գնահատելու 240 օտարերկրյա ուսանողների կրթական փաստաթղթերը, որոնք դիմել են նախարարություն՝ շարունակելու իրենց կրթությունը՝ տեղափոխման կարգով: Համաձայն փաստաթղթերի դիմորդների ճնշող մեծամասնությունը Հնդկաստանի և Պակիստանի քաղաքացիներ են, որոնք սովորել են տարբեր երկրներում գործող բժշկական կրթություն իրականացնող հաստատություններում: Սեղմ ժամկետներում պարզվել է, որ

- 88 դիմորդ սովորել է չճանաչված/կեղծ բուհերում,
- Ռուսաստանի և Ուկրաինայի բուհերում սովորած դիմորդների մեծ մասը չեն ավարտել նշված ուսումնական տարին,
- փաստաթղթերի մի մասը կեղծված են եղել, և դիմորդների միայն մի փոքր խումբ կարող է շարունակել կրթությունը ՀՀ բուհերում:

Ինչ վերաբերում է արտասահմանյան կառույցների կողմից ստացված հարցումներին, ապա համեմատաբար նվազել է ՌԴ-ից ստացվածների քանակը (9%), իսկ Վրաստանից

ստացվածներինը ավելացել է մոտ 10%-ով, որոնք հիմնականում վերաբերում են կանոնակարգվող մասնագիտություններին: Հաշվետու տարվա ընթացքում ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով աճել է բժշկական որակավորումների գնահատումը, ինչը պայմանավորված է այդ երկրներից Հայաստան տեղափոխված բժիշկների մեծ հոսքով, ինչպես նաև ՀՀ Առողջապահության նախարարության կողմից իրականացված բարեփոխումներով, մասնավորապես բժշկական գործունեություն իրականացնելու համար հավաստագիր ստանալու պահանջով:

Շարունակվել է համագործակցությունը կրթական որակավորումների ստուգման արտասահմանյան կենտրոնների հետ, որոնք հիմնականում Միացյալ Թագավորությունից (2%) և Բուլղարիայից (12%) են:

Կենտրոնը, հանդիսանալով ENIC-NARIC և APNNIC ցանցերի անդամ, ակտիվորեն մասնակցում է ցանցերում ծավալվող քննարկումներին, հարցումներին և ուսումնասիրություններին, որոնք վերաբերում են ճանաչման արդի խնդիրներին և ազգային փորձառությանը: Մասնավորապես, հաշվետու տարվա ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- *բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգերը և պահանջները,*
- *մանկավարժության և բժշկության ոլորտներում աշխատանքային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պահանջները,*
- *ճանաչված որակավորումներ և դրանց մակարդակը ազգային և եվրոպական որակավորումների շրջանակներում (Իսպանիայի կրթության նախարարություն),*
- *“full-time” և “part time” եզրույթների սահմանումները ազգային օրենսդրություններում (Էստոնիայի կրթության նախարարություն),*
- *կրկնակի դիպլոմների/մասնագիտությունների ճանաչումը (Ռումինայի կրթության նախարարություն),*
- *ազգային տեղեկատվական կենտրոնների մասնակի ճանաչման գործառույթը (Նոր Զելանդիայի որակավորումների գործակալություն),*
- *ուսանողների տեղափոխության պայմանները և կրեդիտների փոխանցման համակարգը, (Իսլանդիայի կրթության նախարարություն),*
- *ENIC-NARIC ցանցերի գլոբալ ուղղվածությունը:*


## 2. Օտարերկրյա որակավորումների գնահատում և խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

ԱՓՇԱՏԿ-ը խորհրդատվական տեղեկանքներ է տրամադրում հայկական և օտարերկրյա որակավորումներ ունեցող անհատներին՝ ակադեմիական և/կամ աշխատանքային շարժունությունը խթանելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում աճել է կենտրոնի կողմից տրամադրված խորհրդատվական տեղեկանքների քանակը՝ կազմելով 539, 2021թ.-ին տրամադրված 457-ի փոխարեն:

*Պատկեր 2-ում* ներկայացված է տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների՝ համաձայն որի 2022թ.-ին նույնպես կենտրոնի ստացած հարցումների գերակշռող մասը տեղական (76.3%) կառույցներից է:

*Պատկեր 2. Տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների*




Ինչպես 2020 և 2021թթ., 2022թ. ևս ԱՓՇԱՏԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքների զգալի մասը եղել են ՀՀ բարձրագույն կրթական որակավորումների վերաբերյալ և, հայցվել են ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից՝ աշխատանքի անցնելու կամ աշխատանքում առաջխաղացման նպատակով:

*Պատկեր 3-ը* արտացոլում է կենտրոնի կողմից տրամադրված խորհրդատվական տեղեկանքները՝ ըստ որակավորումների մակարդակի: Ինչպես և նախորդ տարիներին

գնահատված որակավորումների 54.0% եղել են բակալավրի որակավորումներ և միայն 0.2% դոկտորական որակավորումներ:


*Պատկեր 3. Խորհրդարվության տրամադրում ըստ որակավորումների*



Հարկ է նշել, որ 2022թ. գնահատված ազգային և օտարերկրյա որակավորումների հարաբերակցությունում գերակշռող մասը հայկական որակավորումներ են:

Ստորև բերված Պատկեր 4-ը ներկայացնում է ԱՓՇԱՏԿ-ի կողմից կրթական որակավորումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վիճակագրությունը՝ ըստ մասնագիտությունների (Պատկեր 4):

**Պատկեր 4. Տեղեկատվություն ըստ մասնագիտությունների**



Ինչպես 2021թ.-ին, հաշվետու տարվա ընթացքում տրամադրված տեղեկատվության զգալի մասը իրավագիտություն մասնագիտությամբ որակավորումների վերաբերյալ է եղել՝ 670 որակավորում: Մեծ թիվ է կազմել բժշկության(542), մանկավարժության (313), ճարտարագիտության(260) և տնտեսագիտության(259) ոլորտում շնորհված որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը: Հաշվետու տարվա ընթացքում զգալիորեն ավելացել է բժշկական որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության քանակը, ինչը ինչպես արդեն նշվել էր, պայմանավորված է ՌԴ-ից և Ուկրաինայից Հայաստան տեղափոխված բժիշկների մեծ հոսքով, ինչպես նաև առողջապահական ոլորտի կանոնակարգումներով:

**Հիմնական վիճակագրական տվյալներ**

Ամփոփելով 2022թ-ի ընթացքում կատարված աշխատանքները՝ կարելի է արձանագրել հետևյալ ցուցանիշները.



- Տրամադրված **խորհրդատվությունների** ընդհանուր քանակը (վճարովի և անվճար ) 69.8%-ով գերազանցել է 2021թ. փաստացի ցուցանիշը՝ կազմելով **2786 գործ**:
- Գրավոր խորհրդատվությունների 85.8%-ը կազմել են տեղական և արտասահմանյան կառույցներից ստացված հարցումները:
- Անհատներին և կազմակերպություններին տրամադրված վճարովի խորհրդատվական տեղեկանքների թիվը կազմել է **539, որը 17.9%-ով ավելի քան 2022 թ. ցուցանիշը**:
- Բացահայտվել են կրթական փաստաթղթերի **կեղծման 10 դեպք** և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է իրավապահ մարմիններին:

Ինչպես վկայում են վերոնշյալ վիճակագրական տվյալները, ԱՓՇԱՏԿ-ը 2022թ. աշխատել է ծանրաբեռված ռեժիմով: Չնայած դրան անձնակազմը ակտիվորեն մասնակցել է միջազգային ծրագրերին և դրանց շրջանակներում կազմակերպված միջոցառումներին, ENIC-NARIC ցանցերի հանդիպումներին, ուսումնասիրություններին:

### 3. Միջազգային ծրագրեր

#### 3.1 Փախստականների որակավորումների եվրոպական անձնագիր (ՓՈԵԱ)/European Qualifications Passport for Refugees<sup>1</sup> (2018-2025)/3րդ փուլ

2022 թ. տեղի է ունեցել ծրագրի համակարգող խմբի երկու հանդիպում, ինչպես նաև մի շարք գնահատման սեսիաններ: ԱՓՇԱՏԿ-ի գնահատման մասնագետները միջազգային թիմի կազմում մասնակցել են 3 գնահատման սեսիանների, որոնցից երկուսը՝ առցանց: Գնահատվել են 73 փախստականների որակավորումներ տարբեր երկրներից<sup>2</sup>:

Հաշվի առնելով 2022թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը՝ գնահատման սեսիանները մի մասը կազմակերպվել են Ուկրաինայից փախստականների որակավորումների գնահատման համար: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են երկու վեբինար Ուկրաինայի և Աֆղանստանի կրթական համակարգերի վերաբերյալ, որոնց մասնակցել են կենտրոնի գնահատման մասնագետները: Վեբինարները հնարավորություն են տվել արդիականացնել փախստականների որակավորումների գնահատման

<sup>1</sup> <https://www.coe.int/en/web/education/recognition-of-refugees-qualifications>

<sup>2</sup> Ուկրաինա, Պակիստան, Բանգլադեշ, Ադրբեջան

մեթոդաբանությունը և գործիքակազմը, ծանոթանալ տարբեր երկրների փորձառություններին և քննարկել սեսիաների ընթացքում առաջացող խնդիրները:

### **3.2 Խթանելու փախստականների որակավորումների ճանաչման արդյունավետ ազգային մեխանիզմը Իտալիայում (2022-2025)**

Ծրագիրը, որը սկսվել է 2022թ. սեպտեմբերին, իրականացվում է իտալական ազգային տեղեկատվական կենտրոնի/CIMEA և Իտալիայի գործատուների ասոցիացիայի կողմից՝ ֆինանսավորվելով Եվրախորհրդի և Եվրահանձնաժողովի կողմից: Դրա նպատակն է օգնել Իտալիայում գտնվող փախստականներին աշխատելու համար: ԱՓՇԱՏԿ-ը հանդիսանում է ծրագրի գործընկերը և դեկտեմբեր ամսին կենտրոնի երկու մասնագետներ մասնակցել են Տուրինում կայացած գնահատման սեսիաներին: Գնահատվել են 32 ուկրաինացի փախստականների որակավորումներ:

### **3.3. NACAR-բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման վերաբերյալ հայ-նորվեգական համագործակցություն/NACAR-Norwegian-Armenian Cooperation in Admission and Recognition (2018-2020)/DIKU.**

Հայ-նորվեգական այս ծրագիրը երկարաձգվել էր մինչև 2022թ. հուլիսը: 2022թ. ընթացքում պարբերաբար տեղի են ունեցել առցանց հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել և քննարկվել է ՀՀ բուհեր ընդունելության վերաբերյալ ձեռնարկի նախնական տարբերակը, ինչպես նաև մշակվել են հայկական և նորվեգական կրթական համակարգերի նկարագրությունները: NACAR-ի նպատակն էր Հայաստանում և Նորվեգիայում ակադեմիական ներուժի զարգացումը և երկու երկրների բուհերի միջև համագործակցության խթանումը՝ օտարերկրյա ուսանողների ընդունելության և ճանաչման ինստիտուցիոնալ թափանցիկ չափանիշների և ընթացակարգերի կիրարկմամբ: Ծրագիրն ուղղված էր որակավորումների ճանաչման ինստիտուցիոնալ ընթացակարգերի մշակմանը:

2022թ. ապրիլի 19-23-ը ծրագրի հայկական գործընկերները (7 հոգի) այցելեցին Նորվեգիա, որի ծրագիրը բաղկացած էր երեք մասից.

- Առաջին օր - Կրթության որակի ապահովման նորվեգական գործակալությունը (NOKUT) կազմակերպել էր սեմինար նորվեգական կրթական համակարգի թվայնացման վերաբերյալ՝ ներկայացնելով դիպլոմների և ճանաչման ռեգիստրները, ինչպես նաև միջին մասնագիտական որակավորումների ճանաչման ազգային փորձառությունը:
- Երկրորդ օր - հանդիպումներ էին կազմակերպվել Հարավարևելյան Նորվեգիայի համալսարանի տարբեր բաժինների հետ (USN/University of South-Eastern Norway)

ուսումնասիրելու երկու երկրների բուհերի միջև հետագա համագործակության հնարավորությունները: Բոլոր երեք համալսարանները մեկ անգամ ևս ներկայացրին իրենց հաստատությունները՝ հնարավոր համագործակցության առաջարկներով:

- Երրորդ օր - տեղի ունեցավ ծրագիրը համակարգող խմբի հանդիպումը՝ քննարկելու ավարտական համաժողովը, դրա օրակարգը և մի շարք ֆինանսական հարցեր:

NACAR-ի ավարտական համաժողովը կայացավ 2022թ. մայիսի 13-ին Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանում: Դրանից մեկ օր առաջ՝ մայիսի 12-ին տեղի է ունեցավ համակարգող խմբի հանդիպումը: Ավարտական միջոցառմանը մասնակցում էին 57 հոգի՝ ՀՀ բուհերի և ԿԳՄՍ նախարարության, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակազմի երևանյան գրասենյակի ներկայացուցիչներ: Ծրագրի կարևոր արդյունքներն են.

- ԱՓՇԱՏԿ-ի կողմից մշակված ՀՀ կրթական համակարգի նկարագրությունը հնարավորություն տվեց ՀՀ որակավորումները ներառել NOKUT-ի ավտոմատ ճանաչման օտարերկրյա որակավորումների ցանկում:
- Բուհեր ընդունելության վերաբերյալ ձեռնարկը, որում ներառված է երեք բուհերի ընդունելության և ճանաչման ինստիտուցիոնալ փորձառությունը, օտարերկրյա որակավորումների ԱՓՇԱՏԿ-ի ճանաչման ընթացակարգը:

### **3.3 Որակավորումների համեմատումը հուսալի ճանաչման համար-2(2021-2022)/QUATREC2-Comparing qualifications for reliable recognition**

Ծրագրի նպատակն էր բուհերի և գործատուների համար դյուրացնել որակավորումների գնահատման գործընթացում ուսումնառության արդյունքների արդյունավետ օգտագործումը՝ նպաստելով որակավորումների արդար ճանաչմանը:

2022թ. ընթացքում «QUATREC 2 ծրագրի շրջանակում տեղի են ունեցել երկու գործընկերային հանդիպումներ/peer learning՝ ապրիլին Ռիգայում և մայիսին Երևանում: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ծրագրի համեմատական արդյունքները, ինչպես նաև որակավորումների գնահատման գործընթացում ուսումնառության արդյունքների գործածման լիտվական, անգլիական և հայկական բուհերի փորձը:

Նաև հունիս և հուլիս ամիսներին ՀՀ գործատուների համար կազմակերպվել են երկու աշխատաժողով (մոտ 45 մասնակից), որոնց նպատակն էր ներկայացնել ուսումնառության վերջնարդյունքների դերը ճանաչման գործընթացում:

Ծրագրի ամփոփիչ հանդիպումը տեղի է ունեցել 2022թ. սեպտեմբերին Ռիգայում, որի ընթացքում բուհերին և գործատուներին ներկայացվել է ծրագրի շրջանակներում մշակված

երաշխավորությունների ձեռնարկը՝ ինչպես ձևակերպել ուսումնառության վերջնարդյունքները դրանց արդյունավետ համեմատության և ճանաչման համար:

#### **4. Տոկիոյի ճանաչման կոնվենցիա (ՏՃԿ) և ազգային տեղեկատվական կենտրոնների ցանցը/APNNIC**

Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանային կոնվենցիան օտարերկրյա որակավորումների ճանաչմանը նպաստող միջազգային շրջանակն է, որը սահմանվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Կոնվենցիան բաց է այլ տարածաշրջանների երկրների վավերացման համար: Այն ուժի մեջ մտել է 2018թ. փետրվարին և մինչ այսօր կոնվենցիան վավերացրել են միայն 13 երկրներ՝ ներառյալ Հայաստանը, Վատիկանը, Ռուսաստանը և Թուրքիան: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ասիա-խաղաղովկիանոսյան 46 անդամ երկրներից միայն մի քանիսն են վավերացրել Տոկիոյի կոնվենցիան: Հաշվի առնելով Եվրոպայում բարձրագույն կրթության միջազգայնացման և շարժունության զարգացման բարձր արագությունը, Ասիա-խաղաղովկիանոսյան երկրների դանդաղկոտությունը օտարերկրյա որակավորումների ճանաչման շրջանակի ստեղծման հարցում առեղծվածային է:

Նմանապես դանդաղ են ընթանում նաև **APNNIC ցանցի** կայացումը, որը հանդիսանում է կոնվենցիայի կիրարկման կարևոր գործիքը: ԱՓՇԱՏԿ-ը անդամակցել է ցանցին 2021թ. մայիսին: 2022 թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 2-ը տեղի է ունեցել Տոկիոյի կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի 4-րդ նիստը և Ասիա-խաղաղովկիանոսյան ազգային տեղեկատվական կենտրոնների ցանցի (APNNIC) 2-րդ լիազումար նիստը: Հանդիպումները անցել են առցանց և հյուրընկալվել են Չինաստանի կառավարության կողմից: Նիստերին միացել են 24 երկրներից ավելի քան 100 պատվիրակներ: Կոմիտեն և ազգային փորձագետները նիստերի ընթացքում քննարկել են Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանում որակավորումների ճանաչման ընթացիկ կարգավիճակը և աշխատանքային պլանները մասնավորապես, կապված COVID-19-ի ազդեցությանը առցանց ուսուցման վրա, միկրո-որակավորումների ճանաչման հարցերը: Քննարկվեց նաև Տոկիոյի կոնվենցիայի կիրարկման և դրա մոնիտորինգի անհրաժեշտությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն չորս տարին մեկ անգամ կազմակերպում է գլոբալ և տարածաշրջանային խորհրդակցություններ կրթության հարցերով, դրանց թվում 1993թ. Հանձնարարականը բարձրագույն կրթությանն առնչվող որակավորումների ճանաչման վերաբերյալ: ԱՓՇԱՏԿ-ը ՀՀ-ի անունից պատրաստել է տեղեկատվություն կոնվենցիաների և վերոնշյալ Հանձնարարականի կիրարկման վերաբերյալ համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված հարցաշարի: Այնուհետև տեղի են ունեցել առցանց երկու խորհրդակցություն:

- Սեպտեմբերի 8-ին, որի նպատակն էր քննարկել բարձրագույն կրթության գլոբալ կոնվենցիան և դրա համատեքստում միկրո որակավորումների նպատակը և կարևորությունը: Քննարկվել է նաև միկրո որակավորումների որակի հարցերը՝ խթանելու այդպիսի որակավորումների դերը և արդյունավետությունը:
- նոյեմբերի 4-ին, որի նպատակն էր համախմբել քաղաքականություն մշակողներին և բարձրագույն կրթության շահառուներին, ովքեր զբաղվում են ճանաչման հարցերով, որպեսզի ընդլայնեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության կոնվենցիաների ըմբռնումը և խթանեն դրանց կիրարկումը ազգային մակարդակում:

## 5. Աշխատաժողովներ, դասընթացներ ՀՀ բուհերի համար

• Հունվար ամսին ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ կազմակերպվել է աշխատաժողով ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի համար՝ «Օտարերկրյա որակավորումների ճանաչումը որպես բուհերի միջազգայնացման և շարժունության հիմնաքար» թեմայով: Միջոցառմանը ներկա էին ԿԳՄՍՆ, ՀՀ բուհերից շուրջ 40 մասնակից՝ ներառյալ 12 ռեկտորներ, ռեկտորի տեղակալներ և միջազգային բաժինների ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ժամանակ ԱՓՇԱՏԿ-ը ներկայացրել է իր կողմից իրականացված հետազոտության արդյունքները, որից հետո տեղի է ունեցել քննարկում ճանաչման գործընթացում առկա խնդիրների, օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտության և գործող ընթացակարգերի վերանայման վերաբերյալ: Քննարկվող թեմայի ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2021 թ. ուժի մեջ է մտել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում բարձրագույն որակավորումների փոխճանաչման Տոկիոյի կոնվենցիան, իսկ նոյոմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից միաձայն հավանության է արժանացել ՀՀ կառավարության հեղինակած «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագիծը: Բոլոր երեք կոնվենցիաները (Հայաստանը դեռ 2005թ. միացել էր եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորումների Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային) ունեն ռազմավարական նշանակություն և խթանում են ՀՀ որակավորումների ճանաչումը աշխարհի տարբեր տարածաշրջաններում, ակադեմիական և մասնագիտական շարժունությունը:

• Մարտի 30-ից - ապրիլի 1-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ակադեմիական անձնակազմի համար (ՀԱԱՀ) անցկացվել եռօրյա վերապատրաստում՝ ուսումնառության վերջնարդյունքների բենչմարքինգ թեմայով: ՀԱԱՀ-ի առաջարկով՝ որպես օրինակ ուսումնասիրվել և UNESCO World Reference Levels թվային գործիքով վերլուծվել են բուհի մեկ բակալավրական և մեկ մագիստրոսական կրթական ծրագրեր,

ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության որակավորումների ոլորտային շրջանակը: Ավելին, բակալավրական կրթական ծրագիրը թվային գործիքի միջոցով համեմատվել է նաև ՀԱԱՀ-ի միջազգային գործընկեր համալսարանի նմանատիպ որակավորում շնորհող բակալավրական կրթական ծրագրի հետ: Վերապատրաստմանը մասնակցել են բուհի կողմից ընտրված 10 դասախոսներ:

- Ավանդույթի համաձայն դեկտեմբերի 23-ին կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց բուհերի համար՝ **Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրները** թեմայով: Միջոցառմանը մասնակցել են 10 բուհերի 11

ներկայացուցիչներ: Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվել են վկայականներ:

- Հանդիպումներ են անցակցվել ՄԿՈՒԶԱԿ-ի հետ, որի ժամանակ կառույցները ներկայացրել են իրենց հիմնական գործառույթները և քննարկել համագործակցության հնարավորությունները: Հատկապես շեշտադրվել է ուսումնառության վերջնարդյունքների դերը թե՛ կրթական ծրագրերի մշակման, թե՛ որակավորումների գնահատման համատեքստում:

- Հանդիպումներ են կազմակերպվել նաև Առողջապահության նախարարության և Քաղաքաշինության կոմիտեի հետ: Պետական կառույցների հետ քննարկվել են այդ ոլորտների մասնագիտություններով աշխատելու պահանջները: Մասնավորապես, Քաղաքաշինության կոմիտեի հետ քննարկվել է օտարերկրյա իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթական գործունեություն իրականացնելու թույլատվության տրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

## 6. ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը միջազգային համաժողովներին

2022թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի անձնակազմը մասնակցել է մի շարք միջազգային միջոցառումների՝ ներկայացնելով կենտրոնի փորձը ճանաչման տարբեր հարցադրումների վերաբերյալ, ինչպես նաև հայկական կրթական համակարգը և իրականացված ուսումնասիրությունները: Միջոցառումների մի մասը եղել են առցանց, որը հնարավորություն է տվել կենտրոնի բոլոր մասնագետներին մասնակցել բավականին մեծ թվով վեբինարների, համաժողովների: Ստորև ներկայացված են առավել կարևոր միջոցառումները.

**Հունիս 14-17.:** Նորվեգական HK-dir բարձրագույն կրթության գործակալության կողմից ԱՓՇԱՏԿ-ի տնօրենը մասնակցել է Բերգենում կայացած Eurasia Programme-ի ավարտական համաժողովին՝ ներկայացնելու NACAR-ի հիմնական արդյունքները և

քննարկելու հետագա համագործակցության հնարավորությունները: Նորվեգական կառավարությունը դեռ 2022թ. փետրվարին որոշում էր կայացրել ժամանակավորապես դադարեցնել նոր դրամաշնորհների հատկացումը: Եվ ահա, հունիսն Բերգենում հավաքվել էին Եվրասիա ծրագրի կողմից ֆինանսավորված առավել հաջողված ծրագրերի գործընկերները՝ ներկայացնելու իրենց փորձը, ինչպես նաև քննարկելու հետագա համագործակցության հնարավորությունները: Համաժողովի ընթացքում քննարկել են բարձրագույն կրթության հետ կապված մի շարք արդիական հարցեր.

- բարձրագույն կրթության ոլորտում Եվրասիայի և գլոբալ համագործակցության միտումները և կառույցի կողմից ֆինանսավորված ծրագրերի ազդեցությունը հասարակության վրա,
- բարձրագույն կրթության ոլորտում կայուն համագործակցությունն ու շարժունության աճը,
- աջակցություն միջազգայնացման և ակադեմիական բարեփոխումների գործընթացին Եվրասիական տարածաշրջանում,
- Ուկրաինայի բարձրագույն կրթության ներկայիս իրավիճակը և ինչպիսի օգնության կարիք կլինի պատերազմի ավարտից հետո,
- ուսանողների և ակադեմիական անձնակազմի շարժունության իրական արժեքը, առանց սահմանների դասավանդումը:

Նախատեսվում է, որ 2023թ. մայիսին ծրագիրը կներկայացվի Nordic Talks-ի ժամանակ, որը հովանավորվում է Nordic Council-ի կողմից:

**Հունիսի 18-22:** ENIC-NARIC ցանցի 29-րդ տարեկան հանդիպումը տեղի է ունեցել Դուբլինում/Իռլանդիա, որին մասնակցում էին մոտ 140 գնահատման մասնագետներ ինչպես Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի երկրներից, այնպես էլ Տոկիոյի կոնվենցիայի երկրներից: ԱՓՇԱՏԿ-ի երեք գնահատման մասնագետներ մասնակցել են տարեկան հանդիպմանը: Համաժողովի ծրագիր բավականին լայնածավալ էր և դրա օրակարգում ներառվել էին աննախադեպ թվով հարցեր: Տարեկան հանդիպումը հյուրընկալում էր Դուբլինի Տեխնոլոգիական համալսարանը: Բացի ընդհանրական սեսիաններից, համաժողովը բաղկացած էր նաև 10 սեմինարներից, որոնք հնարավորություն տվեցին տարբեր երկրների ազգային տեղեկատվական կենտրոններին ներկայացնելու վերջին երկու տարվա ընթացքում իրենց կողմից իրականացվող աշխատանքները: Սեմինարների թեմատիկան բավականին բազմազան էր և ներառում էր ինչպես թվայնացման հնարավորությունները ճանաչման ոլորտում, այնպես էլ բարձրագույն կրթության մուտքի իրավունքը, որակի ապահովման, կեղծարարության, միկրո-որակավորումների ճանաչում ճանաչման թվային լուծումները:

Ձեկույցի մեջ նաև վերլուծական համեմատություն է արվել մշտադիտարկյալ առաջին զեկույցի հետ և այն ներառում է եզրակցություններ և առաջարկություններ անդամ երկրների պատասխանատու պետական մարմիններին՝ կոնվենցիայի հետագա կիրարկման համար: Մշտադիտարկյալ զեկույցները հասանելի են [www.enic-naric.net](http://www.enic-naric.net) կայքում:

## **7. Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)/Բոլոնիայի գործընթաց**

2022թ. ընթացքում Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի (ԲԳՀԽ) ճանաչման *TPG B* աշխատանքային խումբը հանդիպել է երկու անգամ: Հունվարի 18-ի հանդիպման նպատակն էր քննարկել Դիպլոմի հավելվածի օպտիմալացման և դրա թվային լուծումները: Աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են իրենց ազգային և/կամ ինստիտուցիոնալ փորձը: Հունիսի 9-10-ի հանդիպման նպատակն էր կիսվել ազգային փորձով և ԼՃԿ-ի հետագա կիրարկման քայլերով: *TPG B* հանդիպմանը նախորդել էր սեմինար ուսուցման այլընտրանքային ուղիների և դրանց ավարտին շնորհված որակավորումների ճանաչման վերաբերյալ: Երկու հանդիպումներին ԱՓՇԱՏԿ-ը մասնակցել է առցանց: Աշխատանքային խմբի չորրորդ հանդիպումը նույնպես կլինի առցանց և տեղի կունենա 2023 թ. հունվարի 24-ին:

## **8. Հետազոտությունների, ուսումնասիրությունների, հարցումների իրականացում**

2021թ. ԱՓՇԱՏԿ-ի Եվրախորհրդի աջակցությամբ իրականացված «Հայաստանի Հանրապետությունում կրթական կեղծարարության իրավիճակը. ռիսկերը և պատասխան քայլերը ԲՈՎԻԴ-19-ի դարաշրջանում» ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են մի քանի միջազգային հարթակներում:

**Հոկտեմբերի 17-20**-ը Գլազգոյում/Շոտլանդիա տեղի ունեցած Միջազգային որակավորումների գնահատման մասնագետների ասոցիացիայի /TAICEP 8-րդ տարեկան համաժողովին:

**Նոյեմբեր 17-18**-ին Եվրախորհրդի ETINED/Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և ազնվության պլատֆորմի լիագումար նիստի ժամանակ:

**Հոկտեմբերի 18-19**-ին Գրացում/Ավստրիա՝ Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի կառավարման խորհրդի նիստին:



## 9. Ֆինանսական հակիրճ տեղեկատվություն

2022 թվականին ԱՓՇԱՏԿ-ը ՀՀ պետական բյուջեի միջոցներից ստացել է հետևյալ հատկացումները.

- «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ» ծրագրի շրջանակում ստացել է 43113.5 հազար դրամ գումար: Գումարն ամբողջությամբ ծախսվել է: Հարկ է նշել, որ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների սկզբնական մնացորդը կազմել է 4607.7 հազար դրամ, այդ գումարից ծախսվել է 1421.6 հազար դրամ: 31 դեկտեմբերի 2022 թվականի դրությամբ մնացորդը կազմել է 3186.1 հազար դրամ:

Վճարովի ծառայությունների, ավանդադրված միջոցներից ստացված տոկոսային եկամուտների և տրանսպորտային միջոցի վաճառքից սկզբնական մնացորդները կազմել են 14886.4 հազար դրամ: Վճարովի ծառայություններից, ավանդադրված միջոցներից ստացված տոկոսային եկամուտներից մուտքերը համապատասխանաբար կազմել են 5057.3 հազար դրամ և 560.0 հազար դրամ, իսկ ընդհանուր ծախսերը՝ 5214.6 հազար դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին նշված միջոցների մնացորդները կազմել և մի շարք այլ հարցեր: Հանդիպման առաջին օրվա ավարտին նշվեց Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի 25-ամյակը:

**Նոյեմբերի 15-ին** Ստրասբուրգում ԱՓՇԱՏԿ-ի տնօրենը մասնակցել է Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի (ԼՃԿ) 9-րդ միջկառավարական կոմիտեի լիազումար նիստին՝ ներկայացնելով Հայաստանը: Նիստի օրակարգի հիմնական հարցն էր ԼՃԿ-ի երկրորդ մշտադիտարկման զեկույցը, որը վերլուծում է կոնվենցիայի միայն երեք սկզբունքները.

- բողոքարկելու իրավունքը,
- տեղեկատվության հասանելիությունը և տրամադրումը,
- տրանսազգային կրթությունը:


Զեկույցի մեջ նաև դիտարկվել են երկու նոր սկզբունքներ.

- ավտոմատ ճանաչումը,
- են 15289.1 հազար դրամ:
- Նախորդ ժամանակաշրջաններից այլ միջոցներից սկզբնական մնացորդը կազմել է 23.0 հազար դրամ, ծախսվել է 2.9 հազար դրամ: Հաշվետու տարվա ավարտին մնացորդը կազմել է 20.1 հազար դրամ:

2022թ. -ին կենտրոնը իրականացրել է նաև հետևյալ ծրագրերը.


- «Կրթական որակավորումների համեմատումը հուսալի ճանաչման համար- QUATREC2» դրամաշնորհային ծրագիր- սկզբնական մնացորդը կազմել է 739.3 եվրո (փոխարկման արդյունքում 403.1 հազար դրամ) և 0.1 հազար դրամ: 2022 թ.-ին ստացվել է 1829.6 եվրո, որը փոխարկումների արդյունքում կազմել է 831.8 հազար դրամ, ծախսվել է 2291.4 հազար դրամը, որից 1056.4 հազար դրամը օգտագործվել է հիմնադրամի ձեռնարկատիրական միջոցներից, որը ենթակա է վերականգնման 2023թ.-ին՝ դրամաշնորհատուի կողմից գումարները տրամադրելուց հետո:
- «Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման հարցերով հայ- նորվեգական համագործակցություն» դրամաշնորհային ծրագիր- ստացվել է 1745.4 հազար դրամ, գումարը ամբողջությամբ ծախսվել է:

Պատկեր 5. 2022թ. դրամական մուտքեր



Ինչպես երևում է պատկեր 5-ում արտացոլված տվյալներից՝ հիմնադրամի մուտքերի գերակշռող մասը ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցներն են: Վճարովի ծառայություններից և այլ մուտքերից ստացված միջոցները կազմում են ընդամենը 16%:

Պատկեր 6. Վճարովի ծառայություններից մուտքերի դինամիկա



Համաձայն Պատկեր 6-ի՝ վճարովի ծառայություններից ստացված մուտքերը մոտ 25%-ով աճել են 2021 թվականի նկատմամբ: